# ՄԻՋԻՆ ՈՒ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԵՐԵԽԱՆԵՐԸ ԵՎ ՏՐԱՎՄԱՆ

Այս տարիքային փուլերում երեխան ավելի է հասկանում իր հետ կատարվող իրադարձությունները, պատկերացումներ է ունենում մահվան, կորստի, կյանքի լուրջ փոփոխությունների վերաբերյալ:

Երեխաները տրավմատիկ իրողությունից հետո դրսևորում են հետևյալ ախտանիշները՝

- անհանգստություն, վախ, տագնապ սեփական անձի կամ մտերիմների համար,
- վախ, որ տրավմատիկ իրողությունը կամ դրա հետևանքները կրկին կվերադառնան, վարքային փոփոխություններ (ուշադրության ցրվածություն, մեկուսացվածություն, ագրեսիվություն, կենտրոնացման և սովորելու դժվարություններ, լարվածություն ընկերների, ուսուցիչների հետ շփվելիս և այլն),
- մարմնական տարաբնույթ դրսևորումներ (գլխացավեր, փորացավեր, սրտխառնոց և այլն),
- անհանգստացնող հույզեր և զգացմունքներ, հուզականան խառնաշփոթ (օրինակ՝ տագնապեցնող մտքեր կամ վրեժխնդրության ձգտում),
- տրավմատիկ իրողության մասին պատմության պարբերաբար վերարտադրում կամ մանրամասների վերհիշում, դրանց վրա կենտրոնացում, չափազանց սուր կամ թույլ արձագանք տարբեր ազդակներին (ձայն, լույս, երաժշտություն և այլն)
- մերժողական, խուսափողա կան վարք (հյուր չգնալ, չծանոթանալ նոր մարդկանց հետ և այլն),
  - տրավմատիկ իրողության մասին պատմության պարբերաբար վերարտադրում
  - գերգրգռվածության նշաններ,
  - հուզական կաղապարվածություն,
  - ինքնաոչնչացման մտքեր, գործողություններ, չափազանց հետաքրքրվա ծություն մահվան թեմայով, անվստահություն դիմացինի հանդեպ, շփման խնդիրներ:

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները: